

պէտք կ'ըլլայ կիրարկութեան դրուելու համար անոր պատրաստած կանոնադրութիւնը Մուրավիոյ մէջ:

Արդարեւ Յովսէփ Արք. Արղութեանցի թողած մէկ վաւերաթուղթը, զոր քիչ յետոյ պիտի տեսնենք, կը վկայէ թէ յիշեալ կանոնադրութիւնը յատազային վաւերացուած է Էջմիածնի զանազան կաթողիկոսներուն կողմէ, ինչպէս Աղեքսանդր Զուղայեցի կաթողիկոսէն (1706-1714), եւ Սիմէոն կաթողիկոսէն (1763-1780):

Բայց կ'երեւայ թէ տարիներու ընթացքին «կտրիճ»ներու եղբայրակցութիւնները թուրքացած էին Մոլտավիոյ մէջ, եւ պէտք կար քիչ մը աւել ներարկելու անոնց: Պէտք կար մանաւանդ փոփոխութիւն ներմուծելու անոնց կանոնադրութիւններուն մէջ: Այդ դործը կը վիճակի Էջմիածնի մէկ նուիրակին, Յովսէփ Արք. Արղութեանցի, ԺԸ. դարու վերջերը:

Յովսէփ Արք. Արղութեանց Երկայնարագուէ, ծայրագոյն նուիրակ Էջմիածնի, հիմնադիր Նոր-Նախիջևանի «եւ այցելու Բեզարայիւ եւ Մոլտավու հայոց, որք են ընդ իշխանութեան երկուց կայսերաց» 1790 Փոար. 20ին Փոթիչանի (Պոթոչան) մէջ կը նորոգէ «զկոնդակս պրաստավայի պատանեկաց ժողովոյն, ըստ խնդրոց բոլոր հասարակութեան Փոթիչանու ժողովրդեան»: Իր նորոգածն է «զվարդեմի սովորութիւնն պրաստավա կոչեցեալ պատանեկաց, զհետ երթալով եւ մեր՝ նախնեացն մերոց Սրբազանից Հայրապետացն սրբոյ աթոռոյն Էջմիածնի եւ Ամենայն Հայոց Տեառն Աղեքսանդրու Զուղայեցոյ, եւ ի ժամանակի նորուն եղեալ Սուչովու սուրբ Օգոստոսի վանից սուսնորդի տեառն Յօզսէնտ Արքեպիսկոպոսի, եւ եւս հոգեծին ծնողին իմոյ ի Քրիստոս հանգուցելոյ՝ երանութեանցն Աստուծոյ արժանաւոր Տեառն Սիմէոն հոգեւոր հայրապետին Ամենայն Հայոց եւ բարձրագահ սրբոյ աթոռոյն Էջմիածնի, որ ըստ խնդրոյ Սրբովու ժողովրդեանն, ի ձեռն Քափրիենց Ազնուամեծար աղաչայ Յովհաննէսի որդին ազնիւ աղաչայ Գրիգորին նորոգեալ էր ի Սուրբ Էջմիածին, Տեառն Աղեքսանդրու հրամանաւ եղեալ կանոնս պատանեկաց յՕգոստոսեայ արքեպիս-

կոպոսին ի ՌՄԻԹ Թոռչն (1680) մերում եւ ի Յունիսի Ժղ. (14)»:

Կանոնադրութեան մէջ պատանեկաց եղբայրութեան համար սահմանուած կանոնները կ'ըսեն թէ

Ա. Երբ իրենցմէ մէկը նշանուի, պարտաւոր են խմբովին երթալ Օգոստոսի վանքը՝ խոստովանիլ եւ հաղորդուիլ ու յետոյ միայն խնջոյքի նստիլ: Զգացող պատանին վանքին պիտի վճարէ 250 ստակ տուգանք:

Բ. Երբ մէկը մեռնի, հարուստ թէ աղքատ, պարտաւոր են թաղման երթալ եւ մոմ կրել թաղուած ատենը: Ով որ գերեզմանը փորուած ատեն հոն չըլլայ 40 ստակ տուգանք պիտի տայ. մինչեւ երկրորդ զանգակը եկողը պիտի չտայ տուգանք. իսկ մոմ բաժնուած ատեն չեկողը պիտի վճարէ 30 ստակ, իսկ եթէ պատանեկապետներն են՝ 2 ստակ պիտի տան:

Գ. Առանց պատանեկապետին հրամանին ժողովէն մեկնողը 3 ստակ տուգանք կուտայ:

Դ. Ծնունդի խթումին՝ բոլոր պատանիները աւետիսի պիտի երթան պատանեկապետին տունը, ու յետոյ զայն ալ միասին առած պիտի պտտին բոլոր տունները՝ հարուստ թէ աղքատ: Ժողովուրդն ալ իր կարողութեան չափով դրամ պիտի տայ անոնց՝ եկեղեցւոյ շինութեան եւ պայծառութեան համար: Թերացող պատանին պիտի վճարէ 100 ստակ:

Ե. Նոյնպէս Զատիկին, Մեռելոցի երկուշաբթին Քրիստոս Յարեաւի պիտի երթան պատանեկապետին, ու զայն ալ միասին առած բոլոր տունները՝ մեռելներուն համար Հայր Մեր ըսելու: Թերացողը 100 ստակ պիտի տայ:

Զ. Ամէն մէկը իր կարողութեան չափով 50, 45 կամ 30-ական ստակ հոգեւոր տուրք պիտի տայ՝ որ պիտի յատկացուի աղքատ մեռել թաղելու եւ եկեղեցին շինելու:

Է. Բոլորը պէտք է ամէն շաբաթ ներկայ ըլլան պատարագի՝ մեռնող կտրիճներուն հոգւոյն, եւ սպրողներուն անփորձ պահպանութեանը համար:

Ը. Թէեւ ամէն օր՝ բայց մանաւանդ ամէն կիրակի ու տօնական օրի պէտք է եկեղեցի եր-